«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի _____ N__-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հյաաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի «Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման արդյունքների՝ համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինման կարգը սահմանելու մասին» N 41-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

- Որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության օրենքի 204-րդ հոդվածի 2-րդ մասի» բառերը փոխարինել «օրենքի 130-րդ հոդվածի 10-րդ մասի» բառերով.
- Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սահմանել մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման արդյունքների՝ օտարերկրյա համարժեք ապրանքներով փոխարինման կարգն ու պայմանները՝ համաձայն հավելվածի։».

- Որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) վերնագիրը շարադրել

հետևյալ խմբագրությամբ.

«ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ».

- Հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն հավելվածով կարգավորվում են «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքում մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման արդյունքների՝ օտարերկրյա համարժեք ապրանքներով փոխարինման հետ կապված հարաբերությունները։».

- Հավելվածի 2-րդ կետում ««Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրի հավելվածում» բառերը փոխարինել ««Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի» բառերով, իսկ «կարգում» բառը փոխարինել «հավելվածում» բառով.
- Հավելվածի 3-րդ կետում «259-րդ հոդվածի 1-ին կետի» բառերը փոխարինել «183-րդ հոդվածի» բառերով.
- Հավելվածի 4-րդ կետում «202-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «126-րդ հոդվածի 1-ին մասով» բառերով.
- Հավելվածի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 13-րդ կետերում «սույն կարգի» բառերը փոխարինել «սույն հավելվածի» բառերով.
- Հավելվածի 9-րդ կետում «10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «3 աշխատանքային օրվա ընթացքում, «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 130-րդ հոդվածի դրույթներին համապատասխան» բառերը.
- Հավելվածի 10-րդ կետում «202-րդ հոդվածով» բառերը փոխարինել «127-րդ հոդվածով» բառերով.
- Հավելվածի 13-րդ կետում «ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած (ստացող) անձին է վերադարձնում փոխարինման թույլտվության ստանալու մասին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ նշելով վերադարձման պատճառը։» բառերը փոխարինել «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 130-րդ հոդվածին համապատասխան մերժում է փոխարինման թույլտվության տրամադրումը՝ նշելով մերժման պատճառները» բառերով.
- Հավելվածի 14-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.
- Հավելվածի ձև N1-ում և ձև N2-ում «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ» բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ